«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի N 1308-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----- ---------- 2025 թվականի N ------- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 1308-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի «Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 1308-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման Հավելված N 1-ում.

ա. ՌՆ8. կետի Նկարագիր 1.-ի k. ենթակետում «N-պիրրոդիլինոն, 1-մեթիլ-2-պիրրոդիլինոն» բառերը փոխարինել «1-մեթիլ-2- պիրրոդիլինոն (N-մեթիլ-2-

պիրրոդիլինոն) բառերով,

բ. ՌՆ10. կետում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

ա) նկարագրական մասում «ավիաշարժիչներ» բառից հետո լրացնել «, անդր-ուղեծրային թռչող սարք» բառերը,

բ) g. ենթակետում ««ինքնաթիռների»» բառից հետո լրացնել «կամ ՌՆ10.j. կետում նշված «անդր-ուղեծրային թռչող սարքերի»» բառերը,

գ) i. ենթակետից հետո լրացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

«j. «Անդր-ուղեծրային թռչող սարք» և հարակից սարքավորումներ և դրանց համար հատուկ նախագծված կամ փոփոխված բաղադրամասեր, ինչպիսիք են՝

1. «անդր-ուղեծրային թռչող սարք»,
2. արձակող սարքեր, վերականգնման սարքավորումներ, վերգետնյա օժանդակող սարքավորումներ,
3. ղեկավարման և վերահսկման համար նախագծված սարքավորումներ։»:

դ) «Նկարագիր 3.»-ը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Նկարագիր 3. ՌՆ10.a., ՌՆ10.d. և ՌՆ10.j. ենթակետերի նպատակների համար ռազմական նշանակության օգտագործման համար փոփոխված ոչ ռազմական «ինքնաթիռի», ավիաշարժիչների կամ «անդր-ուղեծրային թռչող սարքի» համար հատուկ նախագծված բաղադրամասերը ու հարակից սարքավորումները կիրառելի են միայն այն ռազմական բաղադրամասերի նկատմամբ և այն հարակից ռազմական սարքավորման համար, որոնք պետք են եղել ռազմական նշանակության օգտագործման համար փոփոխելու համար:

ե) «Նկարագիր 4.»-ում «ՌՆ10. a. ենթակետում» բառերը փոխարինել «ՌՆ10. a. և ՌՆ10.j. ենթակետերում» բառերով,

գ. ՌՆ19. Կետում կատարել հետևյալ փոփոխություններ ու լրացումը.

ա) a., b. և c. ենթակետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

« a. «Լազերային» զենքի համակարգեր, որոնք հատկանշված չեն ՌՆ19.f. ենթակետում:

1. Մասնիկային ճառագայթային զենքի համակարգեր:
2. Բարձր հզորության ռադիո հաճախականության (RF) զենքի համակարգեր։»:

բ) «Նկարագիր 2.»-ից հետո լրացնել նոր տեխնիկական նկարագիր հետևյալ բովանդակությամբ՝

«<u>Տեխնիկական նկարագիր</u>. ՌՆ19. կետի նպատակների համար 'զենքի

համակարգերը՝ նախագծված են թիրախը վնասելու, ոչնչացնելու կամ առաջադրանքը ձախողելու համար:»,

2) Որոշման Հավելված N 2-ում 7-րդ կետի 7-րդ ենթակետի բ. պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«գ. տեղեկատվություն իրականացվող գործունեության ոլորտի, լիցենզիա ստանալու նպատակի վերաբերյալ:»:

3) Որոշման Հավելված N 3-ում 7-րդ կետի 2-րդ ենթակետի բ. պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«գ. տեղեկատվություն իրականացվող գործունեության ոլորտի, լիցենզիա ստանալու նպատակի վերաբերյալ:»:

4) Որոշման Հավելված N 4-ում 7-րդ կետի բ. պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«գ. տեղեկատվություն իրականացվող գործունեության ոլորտի, լիցենզիա ստանալու նպատակի վերաբերյալ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ Ն. Փաշինյան